ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

5-րդ գումարման առաջին նստաշրջանում ՀՀ Աժ պատգամավոր Էդմոն Մարուքյանի գործունեության վերաբերյալ

Սիրելի քաղաքացիներ,

ընտրվելուց անմիջապես հետո ձեռնամուխ եմ եղել իմ նախընտրական խոստումների իրականացմանը, մասնավորապես 2012 թվականի հունիսի 1-ից Վանաձոր քաղաքում գործում է իմ պատգամավորական գրասենյակը, որտեղ կազմակերպվում են դիմումների և առաջարկությունների ընդունում, քաղաքացիների ընդունելություն: Ինձ հասցեագրված բոլոր գրավոր նամակներին տրվել են գրավոր պատասխաններ, իսկ անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են հանդիպումներ, ինչպես նաև իրականացվում են հետընտրական բակային հանդիպումներ՝ նպատակ ունենալով լսել քաղաքացիների խնդիրները, հուզող հարցերը և քննարկել դրանց լուծման հնարավոր տարբերակները:

ՀՀ Աժ 5-րդ գումարման աշնանային նստաշրջանի ընթացքում իմ կողմից իրականացված պատգամավորական աշխատանքը եղել է ծանրաբեռնված և միևնույն ժամանակ արդյունավետ: Իմ գործունեության առաջնահերթությունները պայմանավորված են եղել ինչպես իմ նախընտրական ծրագրով, նախընտրական քարոզարշավի ժամանակ տրված խոստումներով, այնպես էլ քաղաքացիների կողմից բարձրացված հրատապ խնդիրներով:

Այսպիսով, հնարավորինս համառոտ ներկայացնում եմ այն հիմնական խնդիրները, առաջարկները, նախագծերը, որոնք իմ նախաձեռնությամբ քննարկման առարկա են դարձել կամ քննարկման արդյունքում ընդունվել են որպես լրացումներ և փոփոխություններ գործող օրենքներում:

Մասնավորապես, իմ կողմից ՀՀ Աժ-ում բարձրացվել և քննարկման առարկա են դարձվել այնպիսի խնդիրներ ինչպիսիք են՝

- ՀՀ տարածքային համաչափ զարգացման, «Երիտասարդներին մատչելի բնակարան» ծրագրի և Վանաձորի՝ տնակային ավանի բնակիչների խնդիրները, դատավորների վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը խստացնելու խնդիրը, ինչպես նաև Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կազմի, Սևանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցության և նրա մակարդակի փոփոխության վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերման հարցերը:

- 2004 թվականի փետրվարին Բուդապեշտում ՆԱՏՕ-ի դաշնթացների ժամանակ հայ սպա Գուրգեն Մարգարյանին սպանած հանցագործին Հունգարիայի իշխանությունների կողմից Ադրբեջանին փոխանցելու և Ադրբեջանի նախագահի կողմից վերջինիս ներում շնորհելու կապակցությամբ ՀՀ Աժ կողմից դիրքորոշում արտահայտելու մասին արտահերթ նիստի ժամանակ ելույթով հանդես գալով առաջարկել եմ, որպեսզի պայմաններ առաջադրվեն Հայաստանի և Հունգարիայի հարաբերությունները վերսկսելու համար, իսկ որպես այդպիսի նախապայման մատնանշել Հունգարիայի կողմից Ռ. Սաֆարովի՝ միջազգային մակարդակով հետախուզում հայտարարելը:

- «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելու վերաբերյալ ելույթ ունենալով՝ պահանջել եմ ՀՀ Արդարադատության նախարարից վերականգնել այն հասարակական կազմակերպությունների իրավաբանական անձի կարգավիճակը, որոնք ըստ էության գործում են, սակայն այնուամենայնիվ լուծարվել են, միևնույն ժամանակ զարմանք ու վրդովմունք արտահայտելով այն մասին, որ հասարակական կազմակերպությունները լուծարվել են այս օրենքի ուժով, երբ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով կազմակերպությունը կարող է լուծարվել միայն այն դեպքում, երբ հարկադրաբար դատական կարգով լուծարման գործընթաց է սկսվում և ավարտվում»: Հետևաբար եզրակացնելով, որ օրենքը հակասում է ՀՀ Սահմանադրությանն ու քաղաքացիական օրենսգրքին: Նշված հայտարարության և իմ դիմումի արդյունքում ՀՀ արդարադատության նախարարությունը վերանայել և վերականգնել է ինձ դիմած բոլոր հասարակական կազմակերպությունների իրավաբանական անձի կարգավիճակը:

- Իմ կողմից առաջարկություն է ներկայացվել, որի համաձայն պետք է նույն անձի համայնքի ղեկավարի պաշտոնում անընդմեջ երկու անգամից ավելի ընտրվելու արգելքը վերականգնվի, որովհետև նույն անձի անսահմանափակ ընտրվելու հնարավորությունը վտանգում է ժողովրդավարության զարգացումը տեղական մակարդակում: Այս առաջարկությունը նաև համահունչ է համայնքների խոշորացման բարեփոխման հետ: Նշված փոփոխությունն իրականացնելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունը պաշտոնապես դրվել է շրջանառության մեջ:

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթների քննարկման ժամանակ արտահայտել եմ իմ մտահոգությունը «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրության վերաբերյալ, համաձայն որի ուսուցիչ կարող է աշխատել վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 5 տարի կոնկրետ առարկա դասավանդած բարձրագույն կրթությամբ քաղաքացին: Մտահոգությունս կայանում էր նրանում, որ նման սահմանափակումը լուրջ խոչընդոտներ կարող է առաջացնել գյուղական համայնքներում, որը հաշվի կառնվի ՀՀ կթության նախարարության և գիտության նախարարության կողմից:

- 2013 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկում ժամանակ հանդես եմ եկել ելույթով, որում ասվում էր, որ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով գիտության բնագավառի ծախսերը կազմում են շուրջ 11,241.7 մլն դրամ (ինչը կազմում է 2013թ. ՀՀ պետական բյուջեի ծախսերի մոտավորապես 1%-ը): Կառավարության նախատեսմամբ 2013թ. ՀՀ պետական բյուջեի եկամուտները ավելանալու են 13,2%-ով, այնինչ գիտության ոլոտի ֆինանսավորումը նախատեսվել է ավելացնել մոտավորապես 11%-ով: «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման համար, պետությունը յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում նախատեսում է նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումներ: Այդ միջոցներն ուղղվում են բարձրորակ գիտական կադրերի պատրաստմանն ու որակավորման բարձրացմանը, ինչպես նաև գիտական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, նոր տեխնոլոգիաների մշակմանն ու սարքավորումների ձեռքբերմանը: Փաստորեն, ՀՀ 2013թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը գիտության ֆինանսավորման մասով հակասում է գործող «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 23-րդհոդվածին, քանի որ նախատեսում է նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից պակաս չափով ֆինանսական հատկացումներ:

Հիմնվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի վրա՝ **պահանջել եմ գիտության մասով ֆինանսավորման ավելացում՝ այն հասցնելով նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս չափի:**

Այնուհետև, առաջարկություն եմ ներկայացրել ՀՀ Կառավարությանը՝ 2013թ. ՀՀ պետական բյուջեում գիտության ֆինանսավորումն ավելացնելու վերաբերյալ, այն ամենաքիչը հասցնելով օրենքով սահմանված նվազագույնին՝ հոգալով այդ բնագավառի հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ծախսերը: Առաջարկությունն ընդունվել է, որի **արդյունքում գիտությանը տրամադրվող գումարն ավելացել է 276.5 մլն դրամով:**

- Տեղեկանալով ՀՀ Կառավարության «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման մասին» թիվ N1169-Ա որոշման մասին ելույթով, ինչպես նաև նամակով դիմել եմ ՀՀ Վարչապետին՝պահանջելով վերադարձնել մարզերից Երևան բերված թվով 51 պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները իրենց նախնական պատմական գտնվելու վայրեր և միջոցներ ձեռնարկել դրանք տեղերում պահպանման համար: Հետագայում նաև հայտարարությամբ եմ հանդես եկել, որում տեղեկացրել եմ իմ օրենսդրական նախաձեռնության մասին, որով պատրաստում եմ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի 21-րդ հոդվածում կատարել լրացում, որով հետագայում պատմամշակութային հուշարձանների տեղափոխումը անհնար կդառնա առանց քաղաքացիների հետ քննարկումների:

- ՀՀ Կառավարության հարց ու պատասխանի ժամանակ հարց եմ բարձրացրել «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2006թ. թիվ 352-Ն որոշման հետ կապված, մասնավորապես ՀՀ արդարադատության նախարարին հարցնելով, թե ինչո՞ւ ժառանգներին չի տրվում այս գումարը, և 2-րդ՝ ի՞նչ է լինում այդ գումարի հետ երբ մարդիկ մահացել են: Նախարարը պատասխանեց, որ ՀՀ-ն ոչ թե վերադարձնում է ներդրված ավանդները, այլ տրամադրում է փոխհատուցում, ինչը դրամական օգնություն է ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների կազմում ընդգրկված ավանդատու հանդիսացող անձանց, և հստակ սահմանված է, որ փոխհատուցումը ստանալու ենթակա անձի մահվանից հետո դադարում է գոյություն ունենալ փոխհատուցման այս պարտավորությունը: Եվ եթե այս անձը չկա, այնպես չի, որ այդ գումարները դուրս էին գրված հատուկ այդ անձի համար: Ինչից հետո ես իմ արձագանքում առաջարկել եմ փոփոխութ-

յուն կատարել համապատասխան որոշման մեջ, որով ավանդատիրոջ մահից հետո նրանց ավանդի փոխհատուցման գումարները ժառանգներին կտրամադրվի: Նշված առաջարկությունը քննարկվում է ՀՀ Կառավարությունում:

- ՀՀ Կառավարության հարց ու պատասխանի ժամանակ հարց եմ բարձրացրել Վանաձոր քաղաքում առկա 3-րդ կարգի վթարայնության 84 շենքերի վերաբերյալ, որտեղ բնակվում են շուրջ 2700 մարդ, ովքեր ակնկալում են ՀՀ կառավարության աջակցությունը՝ կապված այդ շենքերի ամրացման հետ: Շենքերը հիմնականում կառուցվել են 60-70-ական թվականներին և երկրաշարժից հետո ստացել են 3-րդ կարգի վթարայնության աստիճան: Նշված բնակարանային ֆոնդը տարիների ընթացքում աստիճանաբար 3-րդ կարգի ստորին սահմանից վերածվում է 3-րդ կարգի վերին սահմանի վթարայնության աստիճանի: Հարցս կայանում էր հետևյալում. թե ինչ միջոցներ է ձեռնարկում կամ ձեռնարկելու կառավարությունը, որ նշված շենքերը ամրացվեն, և արդյոք վերջին տարիներին կատարվել են այնպիսի ուսումնասիրություններ, որով հնարավոր կլինի շենքերը բաշխել ըստ ամրացման կարիքի առաջնահերթության, իսկ եթե չկա նման վերլուծություն, արդյոք անհրաժեշտ չէ կատարել նման վերլուծություն, որով պարզ կդառնա թե որ շենքը ինչ հերթականությամբ և ժամանակացույցով պետք է ամրացվի: ՀՀ կառավարության պատասխանի համաձայն նախ պետք է նոր ուսումնասիրություն կատարվի, որի արդյունքում կարող է աստիճանաբար լուծվել խնդիրը, որի համար պետք է գործադրել բնակիչների և կառավարության համատեղ ջանքերը:

- ՀՀ Վերահսկիչ Պալատի 2013 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկման ժամանակ հարց բարձրացրեցի այն մասին, որ ՀՀ հանրային հեռուսաընկերությունն արդեն 5 տարի է չի ստուգվել և առաջարկեցի առաջիկայում այն ևս ստուգել: Նույն քննարկման ժամանակ նաև մտահոգություն եմ արտահայտել «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ին ՀՀ Կառավարության կողմից տրամադրվող սուբվենցիայի վերաբերյալ, որը վճարվում է մեր պետական բյուջեից, ՓԲԸ-ի նախորդ տարում կրած վնասների համար ինչ-որ աուդիտորական ընկերության տված եզրակացության հիման վրա, և դա արդեն մի քանի անգամ կրկնապատկվել և ավելացել է: Խոսքը 300 միլիոն դրամի մասին էր գնում: Ինձ անհանգստացնում էր, թե արդյոք չարժե ստուգել նաև այս վնասները և տեսնել, թե այդ ինչ վնասներ է կրում այդ ընկերությունը, որ մենք՝ հարկատուներս, պետք է վճարենք նրանց կրած վնասները: Քննարկման արդյունքում ներկայացված առաջարկները և մտահոգությունները ՀՀ վերահսկիչ պալատի նախագահի կողմից ընդունվեցին:

- «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման ընթացքում ես խոսել եմ այն փոփոխության մասին, որով մաքսատան աշխատակիցը հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի հավաստի կամ կեղծ լինելու հանգամանքն է ստուգում հայտի հետագա ձակատագիրը որոշելու համար, մասնավորապես հարցնելով, թե ինչ է նշանակում հավաստի չեն կամ կեղծ են: Կեղծ լինելու հանգամանքը, ըստ էության, արդեն քրեական իրավունքի ոլորտ է գնում, որովհետև կեղծ լինելու պարագայում պետք է նյութեր նախապատրաստվեն, միգուցե նաև քրեական գործ հարուցվի, որովհետև եթե կեղծ փաստաթուղթ է ներկայացնում, որն իրավունք է վերապահում, իսկ իրավունք վերապահող կեղծ փաստաթղթի համար քրեական գործ կարող է հարուցվել: Եզրահանգելով, որ տվյալ պարագայում, հայեցողական լիազորություն է տրված մաքսավորին, գնահատման առումով, կեղծ լինելու և կեղծ չլինելու հանգամանքը, որը նաև 1-օրյա ժամկետում շատ անհասկանալի է, թե ինչ միջոցով է դա արվելու: Բարձրացրել եմ նաև մեքենաների մաքսազերծման ընթացակարգի և արժեքի խնդիրը:

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկման ժամանակ մտահոգությունս եմ հայտնել չսահմանված վայրերում մանր առևտուր իրականացնողների նկատմամբ վարչական առավել մեծ տուգանքների նշանակման վերաբերյալ, որը նախագծի հեղինակների կողմից հաշվի է առնվել:

- «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի քննարկման ժամանակ հարց եմ բարձրացրել այն մասին թե քանի՞ դատավոր կա, որ անցել է թոշակի, սակայն ցածր թոշակ է ստանում, և արդյոք օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ 2013 թվականին նրանք կարո՞ղ են դիմել և ստանալ այդ գումարը: Այսինքն՝ արդյոք բյուջեով նախատեսված են արդեն այդ գումարները: **Նաև առաջարկել եմ, որ ՀՀ Վարչական դատարանում 2013 թվականի հունվարի 1-ից ավելացված 10 դատավորներից 1-ը նշանակվի Վանաձորում, որպեսզի վարչական գործերի քննությունն արագացվի և մեր քաղաքացիները ստիպված չլինեն ամիսներով կամ տարիներով սպասել իրենց վարչական վեճերի լուծմանը:**

- «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում իմ առաջարկությամբ ավելացվեց՝ «ոչ թանկարժեք մետաղից թիթեղյա առարկաների պատրաստում և նորոգում» մասը: Իմ առաջարկի ընդունման արդյունքում ոչ թանկարժեք մետաղից թիթեղյա առարկաների պատրաստումն ու նորոգումը կհամարվի արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակ, ինչի արդյունքում կթեթևանա այդպիսի գործունեությամբ զբաղվող անձանց հարկային բեռը, և այն բացը, որի պատճառով ստեղծվում են հարկման անհավասար պայմաններ նույնատիպ գործունեության տեսակների համար իմ առաջարկի ընդունմամբ շտկվել է:

- Իմ կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ Կառավարությանը՝ «վարժարանը» որպես կրթական հաստատություն ՀՀ Կառավարության «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին թիվ ՀՀ Կառավարության 665-Ն որոշման N 6 հավելվածում ներառելու մասին, որպեսզի վարժարանում՝ ուսուցիչների աշխատանքը ևս համարվի ուսուցչի մասնագիտական ստաժ և ըստ այդմ հաշվարկվի նրանց կենսաթոշակը: Ներկայացված առաջարկի արդյունքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատրաստում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին թիվ ՀՀ Կառավարության 665-Ն որոշման N 6 հավելվածում փոփոխություններ կատարելու նախագիծ:

- Իմ կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Կարայանին՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում Հայաստանի Հանրապետությունում արտադրված սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի համար պետական տուրք չսահմանելու մասին, որով կխթանվի տեղական արտադրության արտահանումը: Առաջարկությունն ընդունվել է:

- Իմ կողմից հարց է ուղղվել ՀՀ սփյուռքի նախարարին օտարերկրյա պետհամարանիշներով ավտոմեքենաների՝ ՀՀ տարածք մուտք գործելու ժամանակ սահմանային անցակետում գանձվող տուրքերին, որոնց վերաբերյալ իրենց դժգոհությունն են արտահայտել այս տարի սեփական մեքենայով ՌԴ-ից Հայաստան ժամանող բազմաթիվ հայրենակիցներ և ՌԴ քաղաքացիներ:

- Իմ կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ ոստիկանապետին հանրապետության տարածքով մեկ տեղադրված տեսախցիկների նախազգուշական ցուցանակները պահպանելու վերաբերյալ, քանի որ տեսախցիկների տեղադրումը նպատակ ունի կանխել ճանապարհային անվտանգությունը ոչ թե վարչական տուգանքների քանակն ավելացնել:

Չնայած նրան, որ այստեղ ես ներկայացրեցի իմ կողմից բարձրացված ամենակարևոր խնդիրները, որոնց լուծման ուղղությամբ աշխատանքներ եմ տարել, իմ գործունեության մասին ավելի մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել իմ պաշտոնական կայքում www.edmonmarukyan.com որտեղ տեղադրված են իմ բոլոր ելույթները և նախաձեռնությունները:

Ավելին, իմ գործունեության գնահատականը տվել է նաև «Մանդատ» ՀԿ-ի կողմից մշտադիտարկում իրականացնող www.parliamentmonitoring.am կայքը, որի տվյալների համաձայն ես միակ մեծամասնական ընտրական համակարգով ընտրված պատգամավորն եմ, որ գտնվում է ամենաակտիվ պատգամավորների տասնյակում:

Սիրելի քաղաքացիներ,

Օգտվելով առիթից՝ սույնով պատիվ ունեմ շնորհավորական բարեմաղթանքներ հղել Ձեզ գալիք Նոր Տարվա և Սուրբ Ծննդյան հրաշափառ տոների կապակցությամբ, արդեն որպես ՀՀ ԱԺ պատգամավոր, ում համար մեծ պատասխանատվություն ու հպարտություն է ազատ ու պայքարող, ստեղծող ու վերակառուցող լոռեցուն ներկայացնելը:

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ ու ցանկանում, որ Սուրբ Ծննդյան խորախորհուրդ ավետիսը՝ սկիզբ դնելով Նոր Տարվան, զորացնի ամենքիս մեր ամենօրյա գործում և մեր առաքելության իրագործման դժվարին ճանապարհին: Մաղթում եմ ջերմություն ու սեր Ձեր ընտանիքներին և հավատ վաղվա օրվա նկատմամբ:

Լավագույն մաղթանքներով,
Էդմոն Մարուքյան
ՀՀ ԱԺ պատգամավոր